


ՏՆՕՐԷԿԻՍՏՐԱԳԻՐ  
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՆԻՒՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ  
Տաճեկան, ողջ դահլիճ. 60  
Վեցամսեայ » 35  
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ  
Տաճեկան Ֆրանկ 20  
Վեցամսեայ » 12

Խմբագր. ԱՐՇԱԿՈՅՍ ԳՐԱԳՐԻ  
ԳԱԶԵՐԷ (Հասցեպանի)

Rédaction du journal arménien  
**ARCHA LOUVICE**  
HABANIEH LE CAIRE (Եգիպտոս)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Խմբագրութեան ուղղուած գրութիւնքն է՝ չ'կն արուի:

ԿԱՐԵՒՈՐ ԱՂԳ

Թերթիկ, ներթախան մատակարարութիւնը պայմանաւորեալ ընկերներէն Տիար Ա. Իսաբեկեան ստանձնած ըլլալով, բաժանարարաց ստացականներն անոր ստորագրութիւնը պիտի կրեն, խմբագրութեան կնքոյն հետ:

ՓՈՐՁԱՔԱՐԸ

Այն վայրկեաններուն, երբ ազգային յղի կեանքի պատմական ծանր րոպէները կը թաւային, երբ հայ ազգի թշուառ պատմութեան էջերը գեռ արիւնք չի չորացած մարտիրոս ժողովրդեան մը արեան բիծերով կը զարդարուին, իրենց հետ ուրուագրելով հոգեվարք հայուն գէժ քաղցրահամ աշխարհի բռնած պերճախօս հրէշութիւններն, ա՛յն վայրկեաններուն, երբ մարդկութեան մտքն յափրացած և արիւնովը գինովցած խայտառակ ազգերու ներկայացուցիչները Լահէի դահլիճն ակունքները կը վարձեն մարդասիրութեան կեղծ շպարով մը վարդագոյն ներկելու համար ա՛յն, ինչ որ սեւ էր, ամենասեւ գոյներու տակ լարուած զգայականներէ շանթահար եղած, իր իսկ ծուղակին մէջ կը բռնուի հայ ազգի այն մեծ դաւաճանը, որ կը չփոթէ ազգովին իրեն յանձնուած Գահի սրբութիւնը, իրեն շուայրած իրաւաս պաղղիչներու և փեշիչներու քանի մը կտոր հնչուն մետաղին հետ, ոտնակոխ ընելով ազգային շահերը:

Լահէի շարաբասակ ժողովը Օրմանեան Պատրիարքի ազգասիրութեան փորձաքարը կը դառնայ, որու վրայ կը փշուրի երբեմնի ժեզոռիդ պապականին ազգասիրութեան կեղծ ազամանը: Դիմակը կը բացուի: Ետեւ խրտուիլակ դաւաճան մը կը կանգնի մեր գէժը:

Հայու գոյութեան կոխը. «ի՞նչ լուկամ չ'ի՞նչըն»՝ զկղերուքով կշռուած արտասահմանեան Հայոց սրտերը ի մի բերած՝ կը թոթուէ անգամ մ'եւս ներկայացնելու իր արդար իրաւունքներու պահանջը: Ամերիկա, Պաշտապա, Եգիպտոս ժողովներ կը սարքուին, միթիւններ կը կազմուին և ներկայացուցիչներ կ'ուղարկուին Լահէի մէջ հաւաքուած ծիրանաւորներու անգոյն ներկայացուցիչներուն, Կանաչ Սեզանին վրայ

զնելու համար հայկական իղձերը պարունակող թուղթը, զոր Պ. Մ. Չերազ ճարտիկ ազգասէրի ոտիւնով մը միայն կը յաղորդուէ պաշտօնական մարդու երեսօյթին տակ մըտած, Լահէի գոնպահ Գոռիկներու խստութիւնները ճեղքելով անցնել և զնել նախագահ Սթանի առջեւ: Արտասահմանի հայը կը ցնցէ այս լուրը, որտի զեզուներով կը ցնծայ յոյսի ամենափոքր նշքին կառչող հայը ամենուրեք ու անգամ մ'ալ կարծես իրաւունք կուտայ իրեն ըսելու: Անկարեկից ազգ, մի՛ յուսահատիր, յո՛ւսահասիւն վերջին յոյսը դեռ յուսալն է, դեռ փռչանքն է . . . :

Շատ չ'անցնիր սակայն. հեռագիրներ կ'երևան. լրագիրներ իրար կ'անցնին. և կը պատուի ազգակործան Պատրիարքին դիմակը, Պաղղիչներու զ'ան առիկ ակադէմի Օրմանեանը և Պատրիարքներէ անբաժան Սուլթանի զրոյրաքահ ստուճը, շքանշաններու բեռան տակ կղացած Տատեանը գլուխ գլխի առած հայկական Սպանդանարանի (Պատրիարքարան) խուլ ու անթափանցիլ որմերուն ետեւը քնշուած ազգի մահը փութացնող հետեւեալ հեռագիրը կը խմբագրեն.

« Հայոց Պատրիարքարանը Չերազի պատգամաւորութենէն բնաւ լուր չ'ունի . . . : Հայոց Պատրիարքը իբրև հայ հասարակութեան Պետ, կարելի չէր որ անգիտանար այդ տեսակ բան մը, մանաւնդ որ Թուրքիոյ բոլոր հայերը Վահ. Սուլթանին հաւատարիմ հպատակներն են, որոնք Օսմ. կառավարութեան գէժ եղած ո՛ր և է ցոյց ասելի կը գտնեն . . . : »

Բարութեան Ոգին սակայն չ'ուշանար երկաթ ճանկերով վար առնելու Օրմանեանի ճակտին փակած դիմակը:

Եթէ պատրիարքական դահլիճ յաւիշսակող Օրմանեանի պաշտօնաւարութեան մութ շրջանին մէջ անոր բռնած երկերեւանի խայտառակ քաղաքականութեան վրայ դեռ բարեմտարար կը տարակուսէինք՝ և չէինք հաւատար թէ այդ գահին վրայ իր խոշոր մարմինը հաստացնող և անյատակ փորը Պաշտապի պատմական փխրաբոյն ու համագամ պետեկող պարարող Օրմանեանը դաւաճանի ոգին կը քօղարկէր իր վեղարին տակ: Հասած է վայրկեանը՝ ուր պէտք է ճանշնալ թէ պատրիարքական գահին վրայ իր գլխին միայն կանաչը պակաս ունեցող

Պատրիարք մ'ունինք այսօր. ա՛յն գահին վրայ որ երբեմն նստած է այսօրուայ Սաղէմի լալահառայ արարականը — ԻՉՄԻՐԼԵՆ:

Օրմանեանի դաւադիր ոգին մեզ աւանայ մոռցնել կը ստիպէ գոյց անկէ ոչ նուազ սեւահամբառ Աշքեան մը, որ գոնէ խոհեմութիւնն ունեցաւ հրատարելու պատրիարքական փայտիքախտէն:

Լահէ հեռագրող Օրմանեան էֆէնտին կարծես մոռցած ըլլայ թէ փայտիքան մ'առաջ, Պատրիարքարանի պատերուն տակ հայութեան է՛ն ազնիւ ուղիները ոչխարի նման տասնեակ հողարով կը խնդրողուէին. Պատրիարքարանի այդ հայ Սթիւքսին համար կարծես անձանթ ըլլային հայկական ջարդերը և դարձեալ այն կոտորածները՝ որ Սուլթանի հրամանով այդ օրերուն մէջ իսկ տեղի ունեցան Մուշի մէջ:

Կայսերական կոշուքի սեղաններէն յոյրացած, «Մուս եղիւր»ի կաշառքէն ծախուած մեր այդ մարդուրին մէջ կարծես ալ մեռած ըլլայ ազգային Եսը և դարձած ըլլայ այն հլու ներթիւնէն որ քանի մը փառայի համար կը փակէ իր աչք ու ականջը, երբ իր տիրուհու պատիւը կը լլուրի իր ներկայութեան:

Այլ ևս ամէն ինչ բացայայտ է: Օրմանեանի մեզրոտ լեզուն, երկերես քաղաքականութիւնը, ստուերի պէս մթութեան մէջ խուսափուկ սողաշողի դաւաճան ոգին, հաճոյակատար մարդու յատուկ եղող դերասանական քարոզչի կերպարանքը Հայը կարող չէ կլել: Ներքին մարդը պարզուած է: Ատելի է այլ ևս ազգի գլխին ճիզուրդաբար փաթտուած այդ Սեւ-Վեղար փորձանքը իր անսղք սրտի և անպէտ կեանքի բոլոր յայտարար նշանները տալով:

Իսկ գու, հայ ժողովուրդ մի՛ խաբուիր այլ ևս աչքերդ Պատրիարքներու վրայ յառած ու սիրող անոնց կեղծաշունչ քարոզներուն յանձնած: Անցած են հովուերգական դարերը, պահանջկոտ եղիր հայ կղերէն, որ երբ եկեղեցու բեմէն ամենամեծ մարդասէրի քարոզները քեզ հնչեցնէ՝ զանոնք հիւսէ անէժքի և ասելութեան բացովը քու սրտիդ մէջ միշտ լծարմ, միշտ վառ պահելու ազգային արդար վրէժխնդրութեան փրկարար հրդեհը. անոնց սիրոյ և հաւատքի խօսքերուն մէջ, պահանջէ որ պարունակուին արեան մէջ խրխուացող հայ-

ընկերքից ողբերու մենչիւնը, սրպէս զի մարմինը ու միտքը միշտ բռնուին սարսուռներու մէջ գողահար և գուռ ամեն վայրկեան յիշես թէ քու եղբայրներդ խողտողութեան, քայրերդ լիութեան ու հայրենիքդ ստրուկ է . . .

Արտասահմանի հայ մամուլին ձայնակցելու համար չէ միայն որ Գաւառն Թրմանեանը ձեռք կը ներկայացնեմ, եղիպտահայեր. իր ասելի անունը արտասահմանի հայերը արտաքսած են արդէն հայ եկեղեցու յիշատակութենէն, և հարկ է որ այնպէս լինի, մեր հազարաւոր նահատակներուն ոսկորները իրենց գերեզմանին մէջ չի խռովելու համար:

ԱՐՄԷՆ

Ա. Զ. Գ.

Ամեն անոնք, որոց մեր թերթը կը զրկուի և առաջին երկու թիւերն մեզի չեն վերադարձներ, մեր բաժանորդաց ցուցակին մէջ կը նշանակուին իբրև բաժանորդ: Լրագրաց Խմբագրութիւններէն կը խնդրուի նիւթանակել իրենց թերթերն:

ԱՄՊԱՏԵՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՍԸ

Իբր ընտանիք մը իւր անդամներէն մին անդամայի կերպով կորսնցուցնելու դժբաղդութիւնը կուսնենայ, փսիւթն կը փութայ իւր սիրելոյն հանգէպ ունեցած վերջին պարտականութիւնը կատարելու երկիւղած յարգանքով: Հարկ չկայ բռն թէ ուր նուիրական պարտք լոկ կրօնական արարութեան կը բաղկանայ: Յուզարկաւորակա՞ն արարողութեանց մասին չէ որ պիտի խօսինք, դորս Գրիստոնէութիւնը իւր միտքի բազմազան հանգամանքով աւելի վե՛ն ու խորագրեցիկ ըրած է, այլ այդ կրօնական հանգէսներուն կատարման եղանակին դէմ դիտողութիւն մ'ունինք:

Յայտնի է թէ՛ քաղաքիս հայ բնակիչները թողի մը մէջ ամփոփ չեն գտնուիր. այլ մաս մը ընտանիք եկեղեցւոյ շուրջը կը թնակի, իսկ մեծագոյն մասը քաղքին ամէն կողմը կը կրկնուի: Արդ՝ երբ ննջեցեալ մը կը պատահի՝ օրինակի համար Ֆեկկայի կամ Ապսիւն եւ կամ Մեկեղի, հանգուցեալին տունը եկեղեցական թափօր կազմուելով կ'սկսին փողոցէ փողոց պարտի մինչև որ եկեղեցի հասնին: Ամառուան այս տաքուն՝ փոշին մէջ թաթխուած խեղճ յուզարկաւորները, եւ եկեղեցական դասը արիւն քրտինք կը մանեն: Օգո՞ւտը, ոչխնչ: Արդեօք այդ երկար շրճագայութեամբ հանգէսին շուրս ու պատկառանքը կ'աւելնա՞յ. ընդհակառակը Շատ անգամ հարկ կ'ըլլայ Պապը Շատրիպի պէս աղտեղի եւ գարշանտ փողոցներէ անցնել, ուր խառն ի խառն դիզուած խաժամուժ ամբողջ, էջն ու իշապանը, սայլն ու սայլապանը կը խանդարեն թափօրին կարգն ու կանոնը: Հո՞ն, երկայնական չորքոտանիին զոխչին միտնալով միւս անդական երկօտանիներուն հայտնէն եւ անպատկառ աղաղակները, ի՞նչ գարշելի հակապատկեր մը կը կազմեն սրբազան հանգէսին հետ: Շատ անգամ մեր եկեղեցականք եւ իրենց կրօնական տարազք ու երգեցողութիւնք ծաղրի առարկայ կ'ըլլան սինթոք մոլեռանց Գեյլանին կողմէն: Մերթ ընդ մերթ գայթակղելի միջադէպեր ալ պակաս չեն ըլլար. ինչպէս անցեալները ննջեցեալի մը յուզարկաւորութեան միջոցին պատանհեցաւ անոպայ վաշտաք կառապանի մը կարծունքով եւ պատճառաւ, որովհետեւ կ'ուզէր թափօրը ճեղքել անցնել առանց սպասելու: Բիչ մնաց տխուր հետեւանք մ'ունենար:

Ննջեցեալը փողոցէ փողոց պարտոցունելու սովորութիւնը շատոնց վերցած է Պոլսոյ եւ ուրիշ մեծ քաղաքներու մէջ: Հոս ալ վերջ տալու է քոյրորդին այդ սովորութեան, որ իւր անպատկառ-

թիւնները ունի այնպիսի քաղաքի մը մէջ, ուր այլակրօն գահիկ ժողովուրդ մը կը բնակի: Ըստ իս, աւելի պատշաճ չըլլար յուզարկաւորութեան հանգէսը ամբողջովին եկեղեցին կատարել, ո՛ւր աւելի վեհութիւն մը կ'զգենու այն եւ, ո՛ւր յուզարկաւորք մտաւիտի կարող կ'ըլլան ունեցողի կարգացուած հոգեւորականաց: Մինչդեռ հիմայ սովորաբար աղօթից մեծագոյն մասը գուրգրէ թէ եւ արդէն Տէրպապաններն ալ յոգնած ըլլալով կարճ կապելու կը նային բնականաբար անանկ որ շատ անգամ թափօրին եկեղեցի մըտնել ու ելնելն հազիւ քառորդ ժամ կը տեւէ:

Հոս ուրիշ մի յոտի սովորութիւն ալ կայ, որ է՝ ննջեցեալի գրգռական երգեցիկ մանուկներ տանել կարգալու համար: Թէեւ ատու եկեղեցւոյ անտուրը քանի մը փարայ աւելի կը մտնէ, սակայն զիտէ՞ք թէ ո՛րքան կը սուժեն այդ դպրոցական տղայք: Օրուան մէկ պահուն եկեղեցիէն մտնակալ եւ չորս-հինգ կամ աւելի ձայնաւոր տղայ կ'ուզուի, եւ անա դասերին թողով տղայք կը վազին կ'երթան՝ զրկուելով այն ժամերուն աւանդուած դասախօսութիւններէն եւ հետեւեալ օրուան դասերը պատրաստելու միջոցէն: Վասն զի շատ անգամ այդ տղաք դործերին աւարտելէն վերջն այլեւս վարժարան չեն վերադառնար: Ահա ասոր համար է որ երգեցիկ տղաք ընդհանրապէս յետադէմ կ'ըլլան: Ըստ որում մօրթուցիկութիւն եւ դպրոցականութիւն իրարու հետ բնաւ համերայն չեն: Առողջապահական տեսակէտով ալ մեծ վրտանք մը միշտ կ'սպասանայ այդ տղայք: Շատ անգամ ննջեցեալի տունը քիմօթի, կեղծ մաշկի, ծաղիկի եւ կամ այլ տարափոխիկ հիւանդութեամբ վարակուած կ'ըլլայ. տղան իւր անգոյշ բնաւորութեամբը վարակուելու վտանգին ենթակայ է: Ի Պոլսու վարժարանի Հոգաբարձութիւնք այս անպատկառութիւնները ի նկատի առնելով միշտ ընդդրած եւ արդիւած են ըտրորոտի տղայոց ննջեցեալի երթալն, ի բաց առեալ այն հաղուադէպ պարագան ուր կ'ըլլան լրագրական աշխատաւորի մը եւ կամ ազգային բարերարի մը երբ մասնաւոր պատիւ մ'ընել կ'ուզուի: Այն ատեն վարժարանին ամբողջ աշակերտաց հետ երգեցիկ մանուկներն ալ կը զրկուին յուզարկաւորութեան հանգէսին:

Հոս շնորհիւ ազգային բարերարի մը թողած կտակին՝ վարժարանի իրեն պէտք եղած եկամուտը լի ու լի ունենալով հանդերձ ցաւալի է որ այսքան ժամանակէ ի վեր եկող դպրոց Հոգաբարձուներէն ոչ մին ձեռնարկ մը, անօրինութիւն մը չէ ըրած յողուտ այդ դպրոց տղայոց իսկ թաղ: Խորհուրդք մտքերուն անգամ չեն անցուներ այդպիսի արդէք մը զնել: Վասն զի այդ պարագային եկեղեցւոյ անտուրը քանի մը զրուշ պակաս պիտի մտնէր . . .

Պէտք է միտնալ ընդ միշտ վերջ տրուի այդ յոտի եւ վնասակար սովորութեան: Միթէ ծնողք իրենց զաւակները վարժարան կը զրկեն քահանաներուն եւ մօրթուցիկութեան օգնականութիւն ընելու: Պէտք է որ եկեղեցւոյ դպրապետ տեղւոյս երկօտանարէն դպրաց գաս մը կաղմէ, եւ ի հարկին անոնցմէ կանչուին գլխերները: Թ. Խ.

Ա. Զ. Գ. Յ. ԼՈՒՐԵՐ

Մեր չորքաքարթի աւուր թուով յիշատակեցինք Եգիպտոսի հայ հասարակութեան կողմէ պատրաստուած մէկ հանրագրութիւնը, որով կը պահանջուէր Ս. Պատարագի միջոցին վերջն յիշատակութիւնը Օրմանեան Պատրիարքի անուան: Ինչպէս կը տեղեկանանք, չորս հոգիէ բաղկացեալ պատգամաւորութեան մը ձեռամբ, նոյն օրն իսկ յիշեալ հանրագրութիւնը մասաուցուած է Պատ. Բաղաք. Ժողովոյ, որ, ինչպէս կ'երեւի, յատկապէս այդ խնդրոյ համար արտակարգ նիստ գումարած էր, հրախրելով նաեւ Պատկ. Վարչութեան Երեսփ. Ժողովոյ Գիւսնի Վսեմ. Ատենազպիրն:

Ժողովը՝ ներկայացող պատգամաւորութեան ստորագրութիւններն առնել վերջ, նկատել առեւած է անոնց թէ, առաջնորդական փոխ-անվարան Հօր անկողնոյ ծառայելուն պատճառաւ առ այժմ հարկ կը համարուի յետաձգել հանրագրութեան մասին իր որոշումներն ընել:

Մեզ զրկուած է մօտաւորապէս 400 ստորագրութիւն կողմ այդ հանրագրի մէկ օրինակն եւ խնդրուած անոր հրատարակութիւնը: Մեր առաջիկայ թուով գոհացում պիտի տանք մեր ազգայնոց յայտնած այդ փափաքին:

Այս վայրկեանի խմբագրութեան հասաւ Պ. Պերճի «Ներշնչումներ» անունով գրքոյկը, որ ազգային այժմէական կենաց վրայ գրուած սիրուն ստանաւորներ կը պարունակէ ընդարձակ ծանօթագրութիւններով:

Տալուրիկ կրդի հեղինակին քաջակերանաց արժանի սոյն գործը, Չերմապէս կը յանձնարարենք մեր արդոյ ազգայիններու ուշադրութեան:

Հ Ր Մ Ի Ի Ս Գ Ի Ի

Յառաջիկայ կիւրակէ 13 Օգոստ. նորակազմ Լսարան-ընթերցատուն ընկերութեան Ընդհանուր Ժողովը կէս օրէ ետք ժամը 2ին ի նիստ պիտի գումարուի եկեղեցւոյ շրջափակին մէջ Մանկապարտէզ-վարժարանը, օրակարգ ունենալով.

- 1.—Ընտրութիւն Ընդ. Ժողովոյ Գիւսնի.
2.—Ընթերցում եւ վաւերացում հիմնական եւ ներքին կանոնադրաց.
3. Ընտրութիւն Գործադիր Ժողովոյ.

Կը խնդրուի որ Լսարան-ընթերցատան բոլոր ներշնչներն, ինչպէս նաեւ այն ամէն ազգայիններն որ անգամակցել կը փափաքին նորակազմ ընկերութեանս, հաճին ներկայ գտնուիլ սոյն նըստի գումարման:

Առժամայ նախագահ Հ. Ա.

ԱՐՇԱԼՈՅՍԸ ձեռքէ կը ծախուի Շաքա Ապտ-իւ-Ազիզի սկիզբը, Ֆարմաօի Օսմանի-յէի քով ծխալվաճառ Տիար ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՐԵԿԱՑԵԱՆԻ խանութը, հատը 20 փարայ ողջ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փար իւր անցեալ օրուան մէկ թուոյն մէջ տէրութեանց միջազգային առողջապահական ժողովոյ պատուիրակներէն Չերմապէս կը խնդրէր որ իւրաքանչիւրը իր կառավարութեան յանձնարարէ Եգիպտոսի դէմ ձեռք առնուած քարանթիւնայի ծայրայեղ միջոցները զանց առնել:

Յիշեալ թերթը յոյս կը յայտնէր թէ պատուիրակները այս պարագային մէջ իւրենց վրայ ժանրացող պարտականութեան մէջ չլիտի թերանան, և թէ համաճարակէն Եւրոպայի պահպանումը ապահովելէն վերջը Եգիպտոսի վաճառականական և սեղանաւորական չահիլն ալ նկատի պիտի առնուն, որոնք զանազան երկիրներու մէջ ի գործ դրուած կամայական արգելքներուն պատճառաւ ա՛յնքան ծանր կերպով վտանգուած են:

Տեղական թերթ մը այս առթիւ հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ. «Մեր յարգելի ընկերո՞վ բաղձանքը լսելի ըլլալու մեծ հաւանականութիւն կայ, վասն զի Ա. Գե. քաանդրիոյ առողջապահական ժողովին

մէջ ներկայացուցիչ ունեցող տասն և վեց Տէրութիւններէն հինգը միտին — Յունաստան, Իտալիա, Թուրքիա, Աւստրիա և Սպանիա — ընդունած են Եզրիպտոսի մէջ ժամանակաւ սուտ-համաճարակին գոյութիւնը և հետեւաբար քարանձինայի տարբեր տարբեր պայմանաժամեր որոշած են, օրինակի համար, Սպանիա՝ որ Միջերկրականի արևմտեան ծայրը կը գտնուի, Չափազանց ամանակամիջոց մը որոշած է. մինչդեռ մեր մերձաւորագոյն գրայցիներէն մին՝ Աւստրիա-Հունգարիա երեք օրուան քարանձինայ գնելով բաւականացած է, ա՛յն ալ թրիէսթէի առեւտրական սենեկին խնդրանաց վըրայ : Վասն զի սա չ'ուզեր՝ որ իւր նաւահանգիստէն ելած արածուծութիւնը Իտալիոյ, Յունաստանի և Թուրքիոյ կողմէն քարանձինայի հաւանական արգելքներու ենթարգ կուին : Եւ արդէն այդ երեք օրուան քարանձինայի ծիծաղելի պայմանաժամը ինքնին կը գրայցէ թէ Աւստրիա-Հունգարիոյ, ինչպէս նաև Գաղղիոյ առողջապահական վարչութիւնը սկիզբէն ի վեր չեն ուզած հաւատալ թէ երևան ելած հիւանդութիւնը Հնդկական ժամախտին համաճարակը եղած ըլլայ : Այժմ՝ յայտնի կ'երևի թէ եղած գահավէժ որոշումները և ծայրայեղ զգուշութիւնները արդարև անտեղի էին, և թէ այժմու հիւանդութեան տեսակն ինչ որ ալ ըլլայ, ասիկայ՝ Հնդկաստանի անարկու պատահար չկրնար ըլլալ երբէք, քանի որ 3 ամսուան ժամանակամիջոցի մը մէջ և արդէն վարակեալ երկրէ մը (Հիճաղ) ուխտաւորներու վերադարձի ծանր պարագային հակառակ՝ հիւանդութիւնը չէ ծաւալած ո՛չ Աղեքսանդրիոյ և ո՛չ ալ երկրին միւս մասերուն մէջ, թէև ճամբան բարձր վին բաց է գէպ ի երկրին ներսերը :

Գործերն այսպէս ըլլալով, Եզրիպտոսի և մանաւանդ Եւրոպայի վարակման ո՛ր և է վտանգէ զերծ ըլլալը ըստ բաւականի հաստատուած է : Տեղւոյն վրայ կատարուած համոզիչ փորձերէն ետքը բանաւոր է ուրիմն յուսալ թէ քարանձինայ հաստատուած երկիրներուն պատուիրակները նախաձեռնութիւն կ'ունենան իրենց կառավարութիւններէն խնդրելու, որպէս զի կարելի եղածին չափ շուտով քարանձինայն վերցունեն, որն որ թէ՛ Եզրիպտոսի, և թէ՛ Յունաստանի, Իտալիոյ և Թուրքիոյ վնասաբեր է :

ԹՈՔԱԽՏ

Գ.

Գարնան.—Մեծագոյն խնդիրներէն մին՝ որ կը ներկայանայ բժշկական գիտութեան մէջ, թոքախտի դարմանն է, որոյ համար անհրաժեշտ են գլխաւոր երկու պայմաններ. մին բժշկական և միւսն առողջապահական :

Ա. Բժեկական. Հիներն որ իրենց միտքն այնքան վրադնշուցած էին անչ մասին, սովոր էին զիմու արիւնատուութեան, կարծելով թէ արիւնն ստեղծուած է թոքերէն արեան բորբոքման. գիտական տեսակէտով սակայն, այս գրութիւնն ո՛չ միայն սխալ է, այլ ևս վնասակար. քանզի արտաքիններու կազմն արդէն տկարացած ըլլալով, այս պարագային մէջ արիւնատուութիւնն ուրիշ բանի չի ծառայէր՝ այլ միայն աւելի տկարացնել

կազմն և նորոգող ախտին զարգացման և այսու փութացնել մահն :

Այս աղիւտներ արտի դարմանման համար եղած են շատ մը մասնաւոր դեղերու ծանուցումներ՝ որոց ամենուն անշուշտ, չենք կրնար հաւատ ընծայել : Ոմանք ևս ջերմապէս յանձնարարած են այլ ևս այլ կազերու և չորիններու ներշնչումն իբր մեղմացուցիչ կամ արգելիչ դարման մը. սակայն ատենք ևս, նուազ բայտուութեամբ, վրեպած են պէտք եղած օգուտը կամ ազդեցութիւնն ունենալէ :

Կարծիքներն այս մասին այնքան կը տարբերին իրարմէ՝ որ եթէ ուշի ուշով քննութիւնը արհեստին մէջ նշանաւոր հանդիսացող բժիշկներու գաղափարներն՝ պիտի տեսնուէր թէ՛ ինչ որ մին թոքախտի իբր մասնաւոր դարման կը նկատէ այս ինչ կամ այն ինչ դեղը, ուրիշ մը այդ դեղի գործածութիւնը կը համարի վնասակար և կամ նոյն իսկ պատճառ թոքախտի : Զօրօրինակ. Տր. Պրիլոնէ կը հաստատէր թէ անդին (մէրքել) պատուական դարման մ'է թոքախտի, մինչ Տր. Ռիս նոյն արտի յաճախակի պատահումը կը վերադրէր անդին գործածութեան : Տր. Մորլըն կը նկատէր քինինին իբր ազդու դարման մը թոքախտի. մինչդեռ Տր. Մոլայի կը պնդէր թէ այդ դեղն ո՛չ միայն անօգուտ է այլ ևս վնասակար : Կախն կը յանձնարարէր քացային իբր մին լաւագոյն դարմաններէն և արգելիչ միջոցներէն, մինչ Տր. Տիլոյս ևս այլք կը հաստատէին թէ քացային թոքախտ յառաջ կը ընթէ և կ'զգուշացնէին այն ևս բիտասարգներն ու երիտասարդներն որ քացային կը գործածէին իբր միջոց իրենց պարարտութեան նուազման : Տր. Ռըք կը հաստատէր թէ թոքախտն արեան բորբոքման վիճակ մ'է, ուստի իբրև դարման կը յանձնարարէր արիւնատուութիւնը. մինչ Տր. Սալվաթորի կը պնդէր թէ թոքախտը տկարութենէ առաջ եկած հիւանդութիւնն ո՛ր և ուստի իբր դարման կը յանձնարարէր զարացուցիչ դեղեր ու անդարար կերակուրներ : Տր. Պեսօզ թոքախտի իբր մասնաւոր դարման կը նկատէր զմասնացակն (տէփրալ) : Իսկ Տր. Փան կը յայտարարէր թէ այդ դեղը վնասակար է նոյն արտին :

Անցեալները մեր բարեկամներէն մին ինձ ներկայացուց հայ գաղթականներէն թոքա-հիւ-ծախտէ վարակեալ երիտասարդ մը՝ որ կը պատմէր թէ զինքն է քաղաքիս հանրածանոթ բժիշկներէն մէկուն՝ ծերունի Տր. Մ...ի որ կ'ըսուի թէ թոքախտի մասնագէտներէն է. սա իւր արտապնդական հարցաքննութեանց մէջ յանդած է այն եզրակացութեան թէ, հիւանդութիւնն յառաջ եկած է զազղիական արտէ. ուստի իբր միակ դարման յանձնարարած է եօտուր սը բօքաս : Երիտասարդն այս դեղը բաւական ժամանակ գործածելէ և օգուտ մը չտեսնալէն վերջ՝ կը դիմէ Տր. Չ...ի, երբ սա մէկ երկու ամիս առաջ հոս կը գտնուէր Տր. Չ...ի կը յայտարարէ թէ՛ եօտուր սը բօքասն իրեն օգուտ չընելէն զատ կրնայ վնասակար ալ լինիլ : Կետեւաբար կը յանձնարարէ բիօօօփի գործածութիւնը : Վարակեալն այս դեղն ևս երկար ատեն գործածելէ և օգուտ մը չտեսնալէն վերջ կրկին կը դիմէ Տր. Մ...ի և կը բացատրէ կողմութիւնը : Տր. Մ...ի կը պնդէ եօտուր սը բօքասի գործածութեան յարատեւութիւնը, հակառակ երիտասարդին պնդումներուն թէ այդ դեղն անօգուտ եղած է իրեն :

Խորհուրդ պիտի առնի մեր այս երկու յարգելի պաշտօնակիցներու, որ փոխանակ եօտուր ևս ատոր նման դեղեր սալու, աւելի լաւ ըրած պիտի ըլլային եթէ առողջապահական քանի մը հրահանքներ տային ընդ որս նաև այնպիսի դեղեր որ կարենային իրենց ազդեցութիւնն ընել ուղղակի թոքերուն վրայ՝ ուր հաստատուած է հիւանդութիւնն : Այդ տեսակ կարգ մը դեղերու անխոհեմ և անյարմար գործածութիւնը թոքերու մէջ գտնուած հիւանդութեանն ո՛ր և է օգուտ մը չընելէն զատ կրնայ վնասակար իսկ դառնալ, զի ատենք կը խանգարեն մարսողութիւնը, կը սկաւրացնեն ստամոքան և սեղի կուտան թերի անընդատութեան ու կազմային տկարութեան՝ որով կը զրգուրն թոքերն, աւելի կը գէշնայ հիւանդութիւնն, և հակայաքայլ կ'ընթանայ իւր աւելի ազդեցութիւնն ի գործ գնելու, այն ատեն «յիշտինն կը լինի չար քան զպաւսիկը» : Պէտք էր

յիշէին մեր յարգոյ պաշտօնակիցը ինչպէս իրենք ևս հաստատած են, թէ հիւանդութիւնը ճախարակողման թոքերու վերին ներքին մասերու մէջ էր և ոչ թէ ստամոքսին. Կետեւաբար տրուած դեղերն որ կ'երթան ուղղակի ստամոքսի մէջ և ո՛չ մէկ օգուտ կրնային ընել թոքերու. այն մասին ուր հիւանդութիւնը գրած է իւր բոյնը. ճիշտ ինչպէս օգուտ մը պիտի չընէր երբ աչքի ցաւ ունեցողի մը ախտէն կամ քթէն քանի մը կաթիլ դեղեր կաթեցնէր :

Տօքթօրներու այս անորոշ և իրարու հակասական կարծիքները իրատար դիտել տուին Բրօքսթօն Կեկիոնի թէ «բժշկական ներկայ գրութիւնը գիտական սպանութիւնն մ'է» :

Բոխ ուղեց այս տարտամ կացութեան դարման մը գտնել և աշխարհիս սկիզբէն ի վեր ցարդ անուճելի մնացած այս խնդրոյն վերջնական լուծում մը սալ : Ինք որ գտած էր դարերէ ի վեր մեղի անձանօթ մնացած թոքային պատիւները (մանրէ) իւր բոլոր ճիշտ ի գործ դրաւ զտանկու նաև այդ սարսաղեցիկ մանրէներու միջոցներն ևս, և իւր մի քանի տեսա փորձերով կարծելով և կամ խաբուելով թէ այլ ևս հասած էր բաղձացեալ կէտին՝ կանխահաս յայտնութիւնն մ'ըրաւ ի մասին իւր գիտնի Գերման կառավարութիւնն այնքան վտանգ Բոխի այդ գիտնի յաջողութեան, որքան ա համբեր անոր կատարելագործման, զԲոխ անմահ փառքով մը պակեղու անդուստ տեսնող մը 1888ին իւր վաղահաս հրատարակութիւններով և ճիզերով վիճել տուաւ ինձ Բոխի իւր գիտքը : Բոխ չվնասեցաւ սակայն ևս զի կ'աշխատի Մալթերը որ օր մը յաջողի, ո՛չ միայն Բոխ այլ ևս ուրիշներ : Տր. Ա. Ս. ՅԱԿՈՒԲԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԴԵՐ

(Հ Ա Յ Ր Շ Ա Ր Մ Թ Ա Ն)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՄԸ.

(Շար. նախորդ թիւին)

Արդեօք Արեւելքի մէջ ուստական քաղաքականութեան տիրոջուսուոր հարկատուի անպատիւ դերը շարունակելու համար է, որ երբեմնի հայարտ Ֆրանսան իւր քաղաքակրթիչ դերը յիշեցնող յիշատակագիրները ծածկելու ստիպուած է, և այսպէս ի նպաստ ուսերու հրաժարած է իւր դարաւոր դերէն :

Կամ թէ վախցա՞ն որ մեր միշտ սուպետական Ֆրանսայի մէջ տիրող հանրային կարծիքը պիտի ստիպէր զմեզ կառավարողները, որ հալածեալներու դատը իրենց ձեռքին մէջ առնուն. ինչպէս նաբոլէոն Գ. Լիբանանի զոհերունը առաւ :

1860ին հալածեալ Մարտիկներուն առաջին մտած մտնքը եղան իրենց նայուածքները գէպի Ֆրանսա դարցնել, ուրիշ կ'ըսպասէին ներկային մէջ իրենց ազատութիւնութիւնը և ապագային ալ ազգու պաշտպանութիւնը :

Տիրողներուն երկաթէն զարնուած ծերունի Լիբանանցի մը, կանչեց իւր գաւակը, նշանաւոր հայրենասէր ժողով Գարաւ, և ըսաւ անոր. «Նորա՛ւ՛՛՛՛, քեզմէ երգում մը կը պահանջեմ : Երբ Ֆրանսայի բրիտանականները իրենց Լիբանանի եղբարց օգնութեան հասնին, պիտի վազն գերեզման, և հողակոյտիս վրայ ծնրադրած յամ ձայնի բարի լուրը պիտի մըմնջես սկանջիս, որպէս զի ես ալ հողին սակէն, երկրիս ուրախութեան մասնակից ըլլամ :

Միւսիւման սուրին տակ զբիտանեայ

ԼԵՒՈՆ ԿԻՄՈՒԹԵԱՆ

Վ.Ա.ԱՄԱՏՈՒՆ ԱՐԵՆ ՏԵՍԱԿ ԵՎ Մ.Ս.ՅՈՅՅՆԵՐՈՒ

ՊՈՆՏՈՎՐԱՑ

Գ.Ա.ՆՈՐԷ. - Մուսի փողոց. - Գ.Ա.ՆՈՐԷ. Ս. ԵՎ Ս. ՍԵՏԻԱՎԻԻ ՎԵՏԱՆԱՍԱՆ ՂԻՄԱԿ

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնսօլի բնտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՒՆ ԵՎ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, սակի, արծաթ եւ քիթի:

Փրանսական եւ ամերիկեան ապրանքաց ամենաբարձր տեսակներէն զարդեղէններ, շորքներ, օտիւր, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱԽՈՐ

2-50

ՏՕՐԵՐՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՍԲՈՅԺ

Ապսին, Շարե Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար բնտիր ապրանքներով կեղծ անխաներ:

Կը գաղթեցնէ վայրկենապէս անուայի ցոււերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղեցիկներ:

Կը բուժէ լինանքու եւ բերնի ամէն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած անոաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

4-10

Ա Ջ Դ

Տիկին Սօֆիկ Աղգապետեան, մանկարարձ, վիպիկ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գաշիքէ հաստատած ըլլալով պատիւ ունի ծանուցանել հայ հասարակութեան՝ որ պատրաստ է իւր խնամքները սալ իրեն պէտք ունեցողներուն:

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խղճամտ աշխատութիւնը զինքը քաղաքիս առաջնակարգ մանկարարներու կարգը կանցընեն: Դիմել Պէն-էլ-Սուրէն, Դուրուսֆիշ փողոց Թիւ 53:

4-6

անուայ հայերը ինկած հարկը հազար հաշիւով ալ իրենց գերեզմանին մէջ վերջին եկեղեցիքով յոյս մը ունին թէ փրանսայի բրիտանականները իրենց Հայաստանի մէջ մնացեալ եղբարց օգնութեան պիտի հասնին:

Տարգրի գագաթներէն մինչեւ Արարատի լեռնաշղթայները տարածուած, եփրանի նախնաց վրայ — այս անհուն գերեզմանին մէջ — գեռ անոնք կ'սպասեն անհամար, որպէս զի իրենց այրիները եւ որբերը իմացեն իրենց գեռ թարմ գերեզմաններուն թէ փրանսայիները եկան:

Իսկ պիտի գա՞ն:

Փրանսայի բրիտանականները հինգ հարիւր հազար հայերու օգնութեան պիտի երթան, որոնք առանց հացի, առանց ապաստանարանի, առանց զգեստի կամ նօթքներէն մեռնելու եւ կամ կրօնափոխ ըլլալու մտաւորաւ վտանգին մէջ են՝ այս միակ յոյսն է որ մեր բրիտանական եղբարց մնացած է իրենց գահիճներուն կողմէ:

Բանի որ կառավարական փրանսան գրիտանները պաշտպանելու կ'ընտրեն որպէս անոր մտաւոր կ'երեւի եւ կը յամառի գործելու, որեւէ բրիտանական փրանսային կը վերաբերի Արեւելքի մէջ իւր իրաւունքները պաշտպանելու եւ ինչ որ ըլլայ շարունակել (maintenir) արեւելքի բրիտանականներու իւր մինչ ցարգ գործադրած պաշտպանութիւնը, ինչ որ միջազգային պայմանագրութիւնները կը ճանչնան:

Եթէ ժամանակի դժբաղդութեանց պատճառաւ զէնքով չէ կարելի ինչպէս հին ատենները, որեւէ ամբողջ փրանսայիները վեհանքն թուիչով մը միացած բարեփոխական նպատակներով պէտք է որ իրենց թըշուառ կարաց օգնութեան հասնին, որովհետեւ Հայաստանի այս վեհանքն բրիտանականները — Հայերը — իրենց արեւելք տրւին իրենց հաւատքին ու ազգային ազատութեանը համար, որեւէ մէջք ալ կը պարտինք մեր արծաթն ու ոսկին տալ այս նահատակ ժողովրդեան:

Ապրտած որ խոստացաւ անվարձ չը թողուլ իւր անուամբ տրուած դատարմ մը շուրջ, պէտքի վարձատրէ առաւելապէս նրբիրպարները:

Շարունակելի Թարգմ. ՃԱՂՄԱ

ԾԻՏԱՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱՇՈՅ

Թիւարան վր իւր աւակերացը. — Կարճեմ, ձեզմե ուրը հոգիին երէ 48 խնձոր, 32 սանձ, 64 տալու եւ 76 շագանակ բուճեմ, իւրմանչիւրիդ ի՞նչ տուած կ'ըլլամ: Ուշիմ աւակերս մը. — Փորի ցու . . .

— Ղազարոս, 10էն 10 հանես եւ ի՞նչ կը մնայ:

— Բակ, տեսնեմ, շուտով:

— Մի՛ շուտիւր, պատասխանէ, գործինակ, քսեմ քի: Հայրիկդ քեզի սարը դուռ տուած ըլլայ, դուն ալ արեւմտի մեկէն ձգած կորսնցուցած ըլլաս, այն ատեն գրպակիդ մէջ ի՞նչ կը մնայ:

— Մոկ մը . . .

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԵՔ - ԷԼ. ԱՍԱՄԻ ԿԻՑ

Կը ծախուի բնտիր տեսակէն մազի ներկ (բաստրոգ) սեւ, շագ անուկագոյն եւ սակեգոյն: Սեւ ներկ շիշով վայրկենապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորու է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը գաղթեցնէ եւ մաշկը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մաղ կը բերէ: 17 պարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիւանալի արգիւնք տեսնուած է: Շիշը 8 դրշող (2 փրանք):

Բուտրա՝ սքանչելի տեսակէն, որը միանգամայն մարմինը բրտիւնքիսպչէ զերծ կը պահէ:

Ճերմկցնող ջուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացման: Եզիպտոսի մէջ միակը:

Լոգանքի ջուր, մարմնոյ թէ՛ փամփոխութիւն եւ թէ՛ անուշահոտութիւն կուտայ:

Ակուայի փոշի եւ ջուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափել եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Օտար երկիրներէ եւ գաւառներէ կանխիկ դրամով եղած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Սոյն ջրերէն կարելի է գտնել նաեւ Ապսին, Տայրէի Սանիթիքի գիմաց Պագար Թիւրք վաճառատուներ:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակագրոյնները:

4-4

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ Ի Գ.Ա.ՆՈՐԷ ԾԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ) Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն ըզուէ տպագրական ամէն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝ Շրջաբերականներ, Մանագրեր, Հրատարակներ, Այցեխարտեր, Գրքեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Ընկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամէն պիտոյններ: Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել զբոճերու մարքութեան, ճշգրտագիտութեան եւ գներու չափաւորութեան մէջ: Եզիպտոսի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին: